

րէն այնպիսի ձկունք բռնեցին, որ ծովու երեսը մէկ միմնոլորտի ճնշմամբ չի կարողացան ապրիլ։ կաշինին ճամբրութեցան, աշքեր դուրս ցըցուեցան ու չարաշար տանջանօք սատկեցան։ Այս ձկունք միայն կրնան ապրիլ ի մեծ խորութիւնս, ուր մեծ ճնշումն կայ և միանգամայն ընդարձակածաւալ ծովային անապատներ, զուրկ ՚ի ծովային բուսոց, և որով մեծ կոփւ պիտի ունենան ձկունք իրենց կեանքը պաշտպանելու համար։

Կարծեմ թէ բաւական են յառաջ բերած դէպքերս համոզելու համար թէ կարելի է գործարանաւոր մարմնոց գոյութիւնն յայլ մոլորակս, ոչ միայն ըստ մեր մոլորակին պայմանաց, այլ և ըստ տարբեր պայմանաց, զորս ի վեր անդր յիշեցինք։

Յաջորդ յօդուածով կը տեսնենք աստեղաբաշխութեան և աստեղաբնագիտութեան պատասխանը առաջիկայ խնդրոյս նկատմամբ։

Շարունակելի

Մարարոնի դիցազանց գերեզմանն։ — Գեռլինի լրագիրներէն մին կ'աւետէ մի հնախօսական հետաքրքրական գիւտ, որ տեղի ունեցել է այս մօտերս Մարաթոնի մօտ։ Մարաթոնեան դաշտին մէջ կայ մի րլուր 9 մէդր բարձրութեամբ, որ հին ժամանակէ ի վեր կը համարուէր Մարաթոնեան պատերազմի մէջ անկեալ 192 Աթենացւոց գերեզմանը։ — Սակայն այս գիւտս ըստ բաւականի տարակուսի մէջ կը ձգէր զմարդս, մոտածելով՝ որ Ծլէյման ոյինչ գտաւ ոյն բրլրան վրայ։ — Բայց այս ատոյդ է որ վերջի ժամանակներս Յունաց տէրութիւնն, զանազան յաջող պեղմունք լնելով յԱտափիէ, կարզը հասաւ նաև Մարաթոնեան բլրան, զոր մեծաւ խնամքով հետազօտելով՝ գտաւ Մարաթոնեան պատերազմի քաջաց գերեզմանը։ Գետին այն կողմերը բարձրացած է 'ի հին ժամանակէ 3 մէդրի շափ, ուստի բլուրն ի սկզբան ունեցել է զրեթէ 12 մէդր բարձրութիւն, և ճիշդ այս խորութեամբ՝ բլրան գագաթէն սկսեալ, և գրեթէ 3 մէդր խորութեամբ՝ արդի գետնի երեսէն, զոնուեցաւ քարէ յատակի նման կարգ մի, որ ծածկուած էր մոխրով 2 էն մինչեւ 8 հարիւրոդամէդր թանձրութեամբ։ Այս մոխրոյն մէջ կան գեռ ևս փայտի ֆացորդք, սաստիկ քայլայեալ մարդկային ոսկերք և անթիւ կաւէ միջակ անօթներ։ Այս անօթներս՝ որք ծածկեալ են սև գիմօք վազող մարդկանց նկարներով, անտարակոյս կը վերաբերին 490 թուականին նախ քան զբրիստոս, որով գերեզմանն ես՝ որ կը բռվանդակէ բազմաթիւ քաջ երիտասարդաց մոխրիներ, կապակցութիւն ունի Մարաթոնեան պատերազմին։ Այս գիւտս մեծ օգուտ ունի ոչ միայն ի հաստատութիւն պատմութեան Մարաթոնեան պատերազմի, այլ և նկարչութեան։

Զարմանալի լուղորդ մի. — Մօտ ժամանակներս, հռչականուն
ամերիկաց՝ լուղորդ Դաւիթ Դալտոն լողալով անցաւ Մանչի ջրան-
քը, Պուղոյնէն մինչև Ֆոլքսթէյն, այսինքն 60 մղոն (90 վերատէն ա-
ւելի) տեղ Կորելով 28 ժամու և 25 վայրկենի մէջ. Դալտոն ազա-
տարար, մակոյկէն (Ocean King) ինքինքը ջրոյն մէջ ձգեց Պուղոյնի
ափունքէն քիչ մը հեռու, և սկսաւ լողալ դէպ 'ի Ա՛գդիոյ ափունքը
կոնսակի վրայ. Ազատարար մակոյկն հետը մէկտեղ կ'երթար, և մէջի
եղած նաւաստին մերթ ընդ մերթ կու տար լուղորդին զօրանալու
համար խանուէ բարիկօղիով (կօնեակով): Օդը շատ գեղեցիկ էր, քա-
մի ամենսին չկար և նովուն երեսը հանդարտ և անշարժ էր: Հանդերձ
այսու Դալտոն մի քանի սննդամ հանգիստ առաւ ջրոյն մէջ տաս
վայրկենէն աւելի: Երկրորդ օրը ժամը 4 ին երեկո, եան դէմ մօտե-
ցաւ ֆոլքսթէյնի ափունքը ի մեծ զարմանս և ի մէջ ծափահարու-
թեանց անթիւ բազմութեան, որք ժողվուեր էին ծովափոնքը հիա-
ցած նորա աննման նիւթական ուժոյն վրայ: Հետը մէկտեղ եկող ա-
զատարար մակոյկի նաւաստին յայտնեց ֆոլքսթէյնի քաղաքատան
որ Դալտոն բոլոր ճամբան կռնըկի վրայ լողաց, բաց 'ի վերջին երկու
մղոնէն: Լողալով մինչև որոշեալ տեղը, Դալտոն բոլորովին ուժու-
թափ եղաւ և տարուեցաւ նաւամատոյցէն մի մերձաւոր հիւանդա-
նոց, ուր բժշկաց խնամքով իսկոյն անկորցն պառկեցուցին, ծածկե-
լով ցրտէն թմրած մարմինը քանի մի վերմակով: Դալտոն ի զարմանս
ամեննեցուն շատ շուտ սթափեցաւ, և այնչափ երկար ժամանակ
մնալով հանդերձ պազ ջրոյն մէջ, ամենսին հիւանդութեան հետք
չղգաց: Դալտոն ծծ տարեկան է, ուժով կազմուածքով և վերջին 20
ամաց մէջ ստէպ վարժութիւն կ'ընէր լողալով Ատլանտեան և խաղա-
զական օվկիանոսաց մէջ, Ամազոնի և Միխիսիրի գետերու մէջ, ինչ-
պէս նաև մշտատատան Բիսկայեան ծոցին մէջ: Երեք տարի առաջ
միտքը դրած էր կռնըկի վրայ լողալով անցնիլ Մանչի ջրանքը, և
այս նպատակաւ եկաւ ի ֆոլքսթէյն, ուր երեք ամիս փորձեր ըրտւ
միտքը դրած կատարելու: Ոչ մի լուղորդ նորա չափ մեծ միջոց լոցա-
լով անցեր է: Մի հաւապետ թէս անունով, որ կորսուեցաւ նիսկա-
րայի հոսանաց մէջ, լողալով անցաւ Մանչի ջրանքը Դուվրէն մին-
չև ի Քալէ 21 ժամու և 15 վայրկենի մէջ:

Ելեկտրականորդիւն ծառոց հատման համար. — Կալիցիոյ մե-
ծամեծ անտառաց մէջ ծառոց հատման համար ելեկտրականութիւն
կը գործածեն:

Անուշ փայտերուն համար գործիքն է փոքր գչիր մը՝ որ ունի շար-
ժում մը երթի և դարձի, և շարժում մը հոլովմանի ձեռն ելեկտրա-
կան փոքր շրմէիլ գործւոյ:

Գործիքն կը դնեն կառքի մը վրայ, որ կրնայ գառնալ ուղղաձիք առանցից վրայ, զոր կը հաստատեն ծառին կոճեղ վրայ։

Գործիքն սուր ծայրն աղեղ մը գծելով կոճեղ վրայ ճեղք մը կ'ընէ : Յետոյ գործիքը առաջ կը մղեն ճեղքն ի խոր մեծցնելու համար, մինչև որ կոճեղ տրամադրին համար . և նոյն ատեն սեպեր կը դնեն ճեղքից փակումն արդիւելու համար . և կ'անցնին հակառակ կողմն և նոյն գործը կը կատարեն, մինչև որ երկու կողմանց ճեղքն գրեթէ ի. բարու հանդիպի։

Գործը կը կատարեն ամենայն կարեռ զգուշութեամբք, տապար և սղց ունենալով ի միասին. և այս ամենայն կը կատարուի խիստ քիչ ձեռաց աշխատութեամբ։

Արծարանանքի մը զարմանալի գիշտը : — Այս ժամանակներս՝ յորում այսպակ կը խօսուի արծաթի նուազութեան վրայ՝ տնչուշահետարրական է հետևեալ գէպքը։

Արքէնսէսի Լայթլը Դուքէն արծաթահանքի մը գիւտին լուրը կը լը-սենք՝ բայց այնպիսի պարագայից մէջ զորս արծան է յիշատակել աստ : Յիշեալ գաւառին բնակիչ մը ձո՞ն Մաք Ատամ, դրամանենցութեան քրէական յանցանաց համար հինդ տարուան բանտարգելութեան դատապարտուել էր : իրեն գէմ եղած դատաստանին մէջ ի մացուցաւ՝ որ Մաք Ատամի շինած դրամները ամենազուտ արծաթէն աւելի էր . դատաւորները չէին կրնար իմանալ պատճառը :

Արդ քիչ վերջը յայտնի եղաւ՝ որ յանցաւորը արդէն գտեր էր արծաթահանքը և իր պիտոյից համար կը գործածէր : Մաք Ատամ թողուց որ զինքը դատապարտեն՝ առանց գալսնիքը յայտնելու . պատժոյն որոշեալ ժամանակը լմնալէն վերջը՝ տուն գարձաւ, և իւր առաջին գործն եղաւ այցելել արծաթահանքին, և գտաւ զայն ճիշդնչէս որ թողուցեր էր :

Յետոյ տեսնելով որ իրեն շահաւոր չէր այսպէս գործածելը՝ որոշեց յայտնել զայն հարուստ սեղանաւորաց՝ բայց պայմանաւ որ զինքն ալ ընկերակցութեան մէջ գրեն :

Ընկերութիւնը արդէն ձեացած է, քիչ ատենէն աշխատութիւնք պիտի սկսին . այս արծաթահանքը ցարդ գտնուածներուն մէջ ամենէն հարուստն է :

Կապիկը և հուրը : — Պ. Ռումանէսի թղթակից մը՝ վերջին ատեններս Ստէնլինի նոր գրոց վրայ զիտողութիւն մը կ'ընէ, յորում երեկի ճանապարհորդը կ'ըսէր, վկայութեամբ կմին փաշայի՝ որ Մը զանկվայի անտառին շիմբանզէր ջահեր կը գործածեն իրենց զիշեային արշաւանաց մէջ :

Սակայն այս առաջին անգամը չէ . ուրիշ բնապատումը և գիտողք ալ այս ծանօթութիւնս ըլքր են , բայց թերևս ցարդ զիտնական աշխարհի անձանօթ մնացեր են :

Պ . Տէլի Հըքսէյի հոգեբանական հոչակաւոր գործոյ մը յառաջարանին մէջ՝ հրոյ վրայ կը խօսի . Կ պատմէք քանի մը ճանապարհորդաց տեղեկութիւններն՝ որք կը հաստատէին՝ թէ տեսեր են նոր աշխարհին մէջ աեսակ մը կապիկներ՝ որ հրոյ գործածութիւնը զիտեն . Այս անորոշ և ընդհանուր ծանօթութիւնը կը յիշենք՝ յուսալով որ այս խնդրոյն մէջ կընայ մեզի առաջնորդել :

Պ . Վիրի ալ՝ իր բնական պատմութեան կապիկ յօդուածին մէջ կը յիշէ որ և շատ տեսակը կապկաց իրենց սորվեցուցած ամէն բաները կը սորվին , օրինակի համար , ջուր բերել , փայտ կրել , անօթ լոււալ , կրակ վառել » և այն և այն ... Եւ ՚ի հաստատութիւնը իւր ըսածին կրանփրէ սպային Ափրիկէան ճանապարհորդութեան դէպք մը կը յիշէ :

« Փուուը կը տաքցունէր . ուշագրութիւն կ'ընէր որ ըլլայ թէ դիպուածով ածուխի կտոր մը վար ինայ և հրդեհի պատճառ ըլլայ . յերմութեան չափը ամենայն սրամութեամբ կը կանոնաւորէր , երբ ճիշդ հարկաւոր եղած աստիճանը հանէր՝ կ'երթար հացագործ կը կոչէր , որ իր կենցանւոյն սրամութեան վրայ ըստ ամենայնի վստահ անհոգ էր յայօմ մասին , և կապիկն ազդարարութենէն վեր . յը իսկոյն կը փութար փուուը ձգելու հացերը կամ կարկանդակները . բազմաթիւ ամաց ընթացքին մէջ , այս հացագործը ամենակին չի յիշեր որ կապիկը կամ սխալած և կամ խաբած ըլլայ » :

Յիրաւի այս կապիկը ընտանեցած էր , սակայն ականատես մը կը պատմէ մեզի՝ որ ուրիշ կապիկ մը ճիշդ նոյն պաշտօնը կը կատարէր հարուստ տան մը մէջ . այսինքն առաւուր կանուխ ձմեռ ժամանակ կ'ենէր և բոլոր կրակարանները կը վառէր՝ իրք տանը սպասաւորը ըլլար :

Փապուղի (tunnel) Սէն - Գլէրի : — Սէն - Գլէր գետին ի լայնութիւնն շինուած փապուղին , ի մէջ Հիւտոսնի և Սառնիայ , աշխարհիս վրայ քան զամէնն երկայն փապուղին է գետիք տակ , և գործ է այս Ամերիկոյ մեծահռչակ ճարտարապետաց միոյն՝ երկայնութիւնն է 6 քիլոմետր , և բոլորովին երկաթեայ է շինութիւնն առանց քար մը կամ կղմինար գտնուելու այս շինուածոյս մէջ . Պարզ խողովակ մ'է կամ կռածոյ երկաթի 6 մէգր տրամաչափով , որուն օդը կը փոխեն շոգեշարժ մերենայիւք , յերմացնելով շոգովով և ելեկտրական լուսով կը լուսաւորեն : երկրտասան ամիս աշխատեցան 600 գործաւորք այս երկայն փապուղոյն անցքն փորելու համար , որուն շինութիւնն ար-

Ճեզ 2,000,000 տովար (10,000,000 ֆրանք)։ Կռածոյ երկաթին թիթելք որ զխողվակն կը կաղմեն այնպէս հատեալ են որ երեք տասան թիթելք և մետաղական մնաց մը՝ որ զբանալին կը կազմէ, խողովակին շրջապատն կը լեցընեն։

Խւրաբանչիւր օզակն կատարեալ 14,150 փարէ (7,000 քիլոկրամ) կը կշռէ և պէտք եղած է 3800 հատ, ուստի և համօրէն կշռն է 25,000 հազարագրամ (tonne)։

Արդ այս հոչակուոր փապուղոյն շինութիւնն առաւելապէս Պ. Հոպսոնի ընծայել պէտք է։

Աշխարհին մեջագոյն ժամացոյցն՝ — Քիչ ատենէն պիտի հասաւատեն Փիլատելիքիոյ Ոթէլ ար Վիլի աշտարակին մէջ ժամացոյց մը որ լրանալու վրայ է, և որյ հաւասարն չկայ յաշխարհի, ժամացուցին երեսն պիտի ունենայ տասն մեղր տրամադիծ և գիշերն ելեկ-տրականութեամբ պիտի լուսաւորուի և այն պիտի բարձրութիւն պիտի ունենայ որ քաղքին ամէն կողմէն տեսանիի ըլլայ։ Վայր՝ ենացոյց ասեղն և մեղր երկայնութիւն և ժամ ցուցընողն 25,50 պիտի ունենան։ Զանգակն որ պիտի զարնէ 25,000 քիլոկրամ պիտի կշռէ և յամենայն կողմանց քաղքին լսելի պիտի ըլլայ։ Իսկ գաշնակաւոր զանգակներ պիտի հնչեցնեն քառորդն, կէս ժամն և երեք քառորդն։

Այս հսկայամարմին ժամացուցին լարեն պիտի կատարուի ամէն որ շոգեշարժ մեքենայի ձեռօք որ աշտարակին մէջ դրուած է։

Լարադայի ոյխարաց յերոպա մոռորձն՝ — Լիլըրթուլի վաճառական մը լորդորեալ Արճէնթինայի Հասարակապետովթեան հիւպատէն, ուղակի Լարլադայէն 300—400 ոչխարթերել տուաւ։

Փորձն լաւ յաջողեցաւ, վասն զի տասոր հատ միայն վնասուեցան ճամբորդութեան միջոց, և միացածներն երբ հասան, կրկին գնով վաճառուեցան սառուցի մէջ պահեալ ոչխարներու միսէն աւելի զորս կը բերեն։ Պուէնոս Այրէսէ եկած շոգենաւներն ցրտացուցիչ աենե կաց մէջ պահելով։

Այս յաջողութիւնս անտարակոյս զրգիռ պիտի ըլլայ ուրիշ վաճառականաց ևս նոյնպէս ընելու, որ և մեծ շահու առիթ պիտի ըլլայ անդղիացի վաճառական շոգենաւուց։